ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1964 Общественные науки

Ս. Ա. Շահկյան

ԱԼԻՇԱՆԸ ԵՎ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀՆԷԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Առ այսօր մեզ շատ քիչ բան է հայտնի այն աղերսակցության մասին, որը գոյություն է ունեցել Վենետիկի Մխիթարյան միաբանության ականավոր անդամներից մեկի՝ Ղևոնդ Ալիշանի և 19-րդ դարի սկզբներից Պետերբուրգում գոյություն ունեցող Արքայական հնէաբանական ընկերության միջև։ Այդ հարցին առաջին անգամ անդրադարձել է հայագետ Ս. Երեմյանն իր «Կենսագրություն Հ. Ալիշանի» աշխատության մեջ, ուր նշված է. «1896 թվականին Ալիշանն ընտրվում է Պետերբուրգի հնէաբանական ընկերության պատվավոր անդամ»։ Այս միակ նախադասությունն էլ հետագայում կրկնվել է Ալիշանի մասին գրած մեր մյուս հեղինակների մոտ, առանց որևէ հավելումների ու լրացումների։

Մեր պրպտումները Լենինգրադի մի քանի արխիվներում այդ հարցի կապակցությամբ հետաքրքրական նոր փաստեր տվեցին։

Հնէաբանական գիտության առաջընթացը Եվրոպայում և նրա՝ աստիճանական զարգացումն ու որպես գիտություն ձևավորվելը տեսնելով, 1846 թ. փետրվարի 25-ին Ռուսաստանի գրական-հասարակական 21 ականավոր գործիչներ (ակադեմիկոս Ֆրեն, պետական գործիչ, իշխան Դոլգորուկի, հնագետ Ուվարով և այլն) խնդրագիր են ներկայացնում Ռուսաստանի ներքին գործերի մինիստրությանը, թույլատվություն խնդրելով Ռուսաստանում ևս հնէաբանական ընկերություն ստեղծելու մասին։ 1846 թ. մայիսի 15-ից, բացման հանդիսավոր արարողությամբ, իր գոյությունն է սկսում Պետերբուրգի հնէաբանական ընկերությունը[1]։

Ընկերությունն ունեցել է հետևյալ կառուցվածքը. 1) պատվավոր անդամ, որ ընտրվում էին պետական-քաղաքական ականավոր գործիչները, զանազան պաշտոնական անձինք, 2) իսկական անդամ, 3) աշխատակից-անդամ, 4) արտասահմանյան պատվավոր անդամ և 5) արտասահմանյան աշխատակից-անդամ։ Այս կառուցվածքն էլ ընկերությունը պահպանում է մինչև իր գոյության վերջը։

Տարիների ընթացքում Պետերբուրգի հնէաբանական ընկերությունն աստիճանաբար վերածվում է ազդեցիկ կազմակերպության, որի անդամ լինելը մեծ պատիվ է համարվում։ Բավական է ասել, որ այդ ընկերության պատվավոր անդամ և աշխատակից-անդամ են եղել այնպիսի ճանաչված հեղինակություններ, ինչպիսիք են վիրաբույժ Սերգեյ Պետրովիչ Բոտկինը (1881 թ. մարտի 31-ից), Նիկոլայ Իվանովիչ Վեսելովսկին (1889 թ. փետրվարի 23-ից),

[1] Ընկերությունն սկզբում կոչվում էր „Археологическо-нумизматическое общество в С. Петербурге“: 1849 թ. հոկտեմբերի 26-ից ընկերությունն իր համար մշակում է նոր կանոնադրություն, վերանվանվում „Императорское Археологическое Общество в С. Петербурге“ և այդպես շարունակում է իր գոյությունը մինչև 1917 թվականի սկիզբը։ Архив Общества при Ленинградском Археологическом Институте, ф. № 3, арх. № 2, стр. 5, 8. арх. № 24, стр. 19. 35, 40.

Ալեքսանդր Իվանովիչ Վեսելովսկին (1888 թ. դեկտեմբերի 13-ից), Նիկոլայ Յակովլևիչ Մառը (1900 թ. հոկտեմբերի 30-ից) և շատ ուրիշներ։ Հայ ժողովրդի ներկայացուցիչներից զանազան ժամանակներում վերոհիշյալ ընկերության կազմում ընտրվել են՝ Նիկոլայ Գեորգիևիչ Ադոնցը (1904 թ. մայիսի 14-ից), Իոսիֆ Աբգարովիչ Օրբելին (1912 թ. դեկտեմբերի 29-ից)։

Լավագույն գիտական ուժերով համախմբված լինելու, Աֆանասի Ֆեոդորովիչ Բիչկովի նման հմուտ նախագահ ունենալու շնորհիվ Պետերբուրգի հնէաբանական ընկերությունն աստիճանաբար աճում ու ամրապնդվում է և 1896 թ. հարց է դրվում հանդիսավորապես նշելու նրա 50-ամյա հոբելյանը։ Սակայն պարզվում է, որ հնէաբանական ընկերությունը խստիվ «տեղական» բնույթ ուներ։ Նրա 310 անդամներից միայն 45-ն էին արտասահմանից, ըստ որում այդ 45-ի մեջ էլ ամենևին հազվագյուտ չէին այնպիսիները, որոնք, քիչ էին պատիվ բերում ընկերությանը։ Անհանգստացած սրանից, հոբելյանական հանձնաժողովը շտապ կարգով ընկերության պատվավոր անդամ է առաջադրում մեծ անուն ունեցող ու լայն ճանաչում գտած գիտնականների՝ Ղևոնդ Ալիշանին, Էդինբուրգի հնէաբանական կոմիտեի նախագահ Բերջեսին, Վիեննայի Կայսերական ակադեմիայի անդամ Բյուլերին, իտալացի իրանագետ, հնախույզ Գվիդիին, Լեյդենի համալսարանի դասախոս, պրոֆեսոր Հենրիխ Կերնին, Լեյդենի հնէաբանական կոմիտեի նախագահ, հնագետ Դե-Գյույոյին, Փարիզի Կոլեժ դը ֆրանսի դասախոս, եգիպտագետ Գաստոն Մասպերոյին, Բեռլինի համալսարանի հռոմեական պատմության պրոֆեսոր Թեոդոր Մոմզենին, Ստրասբուրգի համալսարանի պրոֆեսոր, արևելագետ Թեոդոր Նելդեկեին, Քեմբրիջի համալսարանի դասախոս-հնէաբան Ռիոյին, Բեռլինի համալսարանի պրոֆեսոր, լեկվագետ Էդուարդ Զախաուին, Լոնդոնի արքայական հնագիտական ընկերության նախագահ, պրոֆեսոր Մորենդ Թոմսոնին, Փարիզի հնէաբանական կոմիտեի անդամ, հնագետ Շեֆֆերին։

Ընկերության նախագահ Աֆանասի Բիչկովը 1896 թ. դեկտեմբերի 11-ին շրջանցելով ընկերության կանոնադրությամբ նախատեսվող բոլոր արարողությունները (թեկնածուի ընդհանուր քննարկում, փակ քվեարկություն և այլն) հիշյալ անձանց թեկնածությունները դնում է բաց քվեարկության և բոլորը, առանց բացառության ընտրվում են Պետերբուրգի հնէաբանական ընկերության պատվավոր անդամ։

Պետերբուրգի հնէաբանական ընկերության պատվավոր անդամ ընտրվելու ուրախարիթ լուրը Ալիշանին նախ և առաջ շտապում է ծանուցել նրա մերձավոր բարեկամը՝ Նիկողայոս Մառը։ Ցավոք սրտի, տվյալները առայժմ շատ քիչ են երկու մեծ գիտնականների միջև եղած գրական-գիտական կապերի մասին։ Լենինգրադի՝ ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի ադիտիվի՝ Նիկողայոս Մառի ֆոնդում մեզ հաջողվեց գտնել ընդամենը երկու նամակ Ալիշանից, որոնցից մեկը, գրված 1897 թ. հունվարի 14-ին, Ալիշանի պատասխանն է Մառի՝ ըստ երևույթին շատ ջերմ շնորհավորական նամակին։

«Ակնիւ բարեկամ

Շնորհակալ եմ ձեր շնորհաւորութեանը՝ յանկեղծ բարեկամական սրտով, որ ինձ հաճոյ և պատուական է, քան ինձ շնորհուած պատիւն, որոյ երբէք ակնկալութիւն չունէի և ոչ կարծեմ արժանաւորութիւն։ Հնագիտական ընկե-

բութեանց մեջ ես ինքս արդեն հնութիւն մի եղած եմ, և չէի ախորժէր հնութեան մի նոր տիտղոս մ'այլ աւելցընել վրայս։ Բայց, ի հարկէ, պետք է պատուել զմեզ պատուողները, թէ ոչ արժանէօք, այլ խօնարհութեամբ։ Ես դեռ չընդունեցայ պաշտօնական թուղթ կամ ծանութիւն. որոյ մեջ, եթէ նշանակած չըլլայ իմ պարտքս կամ ընելիքս, խնդրեմ հաճեցէք ինձ իմացընել և թէ առ ո՞ր պետք է գրեմ և շնորհակալեմ։

Ըմ ընկերացս ողջունեմ, մաղթեմ ձեզ առողջութիւն և յաջողութիւն Ձեր ուսմանց և քննութեանց։

Աղօթարար Ծ[առա]
Հ. Ղևոնդ Մ. Ալիշանեան»[2]

Հնէաբանական ընկերությունն, իհարկե, չէր կարող իր նորընտիր անդամներին տեղյակ չպահել նրանց վիճակված պատվի մասին։ Պաշտոնական ծանուցումն Ալիշանին ուղարկվում է հավանաբար փոքր ինչ ավելի ուշ։ Ստորև բերում ենք այդ փաստաթղթի կրկնօրինակը, որը մեզ հաջողվեց գտնել Լենինգրադի հնէաբանական ինստիտուտի արխիվում։

«Милостивейший Государь

Гэонд Алишан

ИМПЕРАТОРСКОЕ Русское Археологическое общество в общем собрании своего 11-го сего декабря, по случаю празднования 50-ти летняго юбилея общества, избрало Вас в Почетные члены общества.

Извещая об этом Вас, милостивый Государь, и прилагая при сем Устав общества и список личного его состава, имею честь присовокупить, что диплом на звание Иностранного действительного члена будет доставлен Вам по подписании Его Августейшим Представителем общества, Его ИМПЕРАТОРСКИМ ВЫСОЧЕСТВОМ ГОСУДАРЕМ ВЕЛИКИМ КНЯЗЕМ КОНСТАНТИНОМ КОНСТАНТИНОВИЧЕМ.

Примите, Милостивый Государь, уверения в совершенном моем почтении и преданности.

Секретарь **А. Ф. Бычков»**[3]

Թե կոնկրետ ե՞րբ է ուղարկվել հիշյալ գրությունը, դժվար է ասել։ Կրկնօրինակը թվական չունի։ Պատվավոր անդամ ընտրված արտասահմանյան մյուս գործիչներին ուղարկված համանուն գրության կրկնօրինակներից միայն էդուարդ Զախաույինն է, որ կրում է «Հունվարի 22» նշումը։ Մնում է միայն ենթադրել, որ Ալիշանինն էլ, հավանարար, ուղարկվել է այդ ժամանակ, մանավանդ, որ այդ թվականը չի հակասում Ալիշանի Մառին գրված նամակի թվագրությանը։

Այս պաշտոնական գրությանը հաջորդում է դիպլոմի առաքումը, որը կատարվել է հունվարից—մայիս ընկած ժամանակաշրջանում։ Ինչպես պահանջում է էթիկան, Պետերբուրգի հնէաբանական ընկերության արտասահմանի պատվավոր անդամները հանդես են գալիս գրավոր պատասխան խոս-

[2] Архив АН СССР, фонд 800, опись 3, № 1335.

[3] «Архив Общества...», фонд № 5, арх. № 14, лист 14 *(ընդգծումները մերը չեն)։*

քով։ Արխիվում մեզ, այլոց պատասխան-նամակների թվում, հաջողվեց գտնել նաև Ղևոնդ Ալիշանի ֆրանսերեն գրված շնորհակալական խոսքը, ուղղված ընկերության նախագահ Աֆանասի Ռիչկովին.

«Արժանապատիվ պարոն

Թույլ տվեք ինձ, առանց մեծարանքի և ներողամտության հայցի իմ մեղանչումների համար, տեղեկացնել ձեզ, Ձեր պատվավոր դիպլոմն ստանալու մասին, որը ինձ ուղարկել պարտավորվել էիք, ընկերակցությամբ այնքան ջերմ խոսքերի, որոնք շատ ավելի արժեքավոր են դառնում իմ ժողովրդի համար ճգնաժամային այս պահերին։

Ես չգիտեմ, թե ով է եղել առաջինը, որ առաջարկել է իմ թեկնածությունը Ռուսական հոչակավոր Կայսերական հնագիտական ընկերության անդամի բարձր կոչման համար, որի մասին ես երևակայել անգամ չէի կարող, բայց և այնպես շնորհակալ եմ նրան, ինչպես նաև ընկերության երևելի անդամներին այդ բանի համար, խնդրելով ձեզնից, պարոն, նրանց մատուցել իմ ջերմ հարգանաց հավաստիքը։

Եթե իմ համեստ աշխատություններից որևէ մեկը (որոնց ցուցակը ձեզ ուղարկում եմ[4]) կգրավի ընկերության գրադարանի ուշադրությունը, կարող եք հանձնարարել։

Ընդունեցեք պարոն քարտուղար իմ խորին հարգանաց հավաստիքը, որով պատիվ ունեմ լինելու ձեր խոնարհ և երախտապարտ ծառան։

Հ. Ղևոնդ, Մ. Ալիշանյան[5]»

Ալիշանի և Պետերբուրգի հնէաբանական ընկերության հետ առնչվող այս մանրամասնությունները, թվում է, որոշ չափով օգտակար կլինեն, նրա կյանքի մի հետաքրքրական էջը լուսաբանելու համար։

С. А. Штикян

АЛИШАН И ПЕТЕРБУРГСКОЕ АРХЕОЛОГИЧЕСКОЕ ОБЩЕСТВО

(Резюме)

До сих пор мы располагаем неполными сведениями о связях одного из крупнейших ученых Армении Гевонда Алишана с Петербургским археологическим обществом. Поиски в различных архивах Ленинграда привели к установлению новых интересных фактов.

Петербургское археологическое общество, в связи с празднованием своего 50-летнего юбилея (общество основано в 1846 году) в 1896 году решает восполнить свои ряды учеными, имеющими общеевропейское признание. Среди других ученых (Моммсен, Захау, Шеффер и др.) этой чести был удостоен и Алишан. 11 декабря 1896 года он избирается почетным членом общества. Об этом сообщает ему Н. Марр.

4 Մեզ չհաջողվեց գտնել այդ ցուցակը։

5 «Архив Общества...», ф. № 3. арх. № 211, лист 35 (Ալիշանի այս շնորհակալական խոսքը մեզ համար թարգմանել է ընկ. Շ. Շահրիկյանը, որին հայտնում ենք մեր շնորհակալությունը)։